ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման, պատճենահանող սարքերի, տպիչների պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-23/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«06» ապրիլի 2023թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

Արմինե Մարգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – տնտեսագետ (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/ՄԻՄ**)

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԾՁԲ-23/02» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2023թ. ապրիլի 06-ին, ժամը 10:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնման գների վերաբերյալ.

Գնման ընթացակարգը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գները (կնքվելիք պայմանագրի (պայմանագրերի) ըստ չափաբաժինների առավելագույն գները), ծառայությունների մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարները.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը (ՀՀ դրամ)	Կնքվելիք պայմանագրի առավելագույն գինը (ՀՀ դրամ)
1	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	**586 500**	3 500 000
2	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	**259 000**	3 500 000
3	Պատճենահանող սարքերի, տպիչների պահպանման ծառայություններ	**13 000**	3 500 000

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
ԱՁ Անուշ Պետրոսյան	ք. Երևան, Արշակունյաց 5
ՍԵԳ ՍՊԸ	ք. Երևան, Մ. Խորենացի 112
ՊՄՍԵՐՎԻՍ ՍՊԸ	Նոր Նորք 6 Լյուքսեմբուրգ 15
Ա/Ձ Բենիամին Դալլաքյան	ք. Երևան, Մայիսի 9, 11շ
Բևեռային ուղի ՍՊԸ	ք. Երևան, Բագրատունյաց 27/1շ.

Ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. **Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրության նպատակով նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2023թ. ապրիլի 19-ին՝ ժամը 10:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Նորայր Աղամալյան

Անդամներ՝

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Արմինե Մարգարյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝

_____ Արուս Խաչատրյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման, պատճենահանող սարքերի, տպիչների պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-23/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«19» ապրիլի 2023թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

Արմինե Մարգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – տնտեսագետ (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/ՄԻՄ**)

1. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում «ԴԴ-ԳՀԾՁԲ-23/02» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

1.1. Անուշ Պետրոսյան ԱՁ-ի, ՍԵԳ ՍՊԸ-ի, Բենիամին Դալլաքյան Ա/Ձ-ի, Բևեռային ուղի ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

1.2. ՊՄՍԵՐՎԻՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը: Հայտով ներկայացված է նաև իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր (Հավելված 1.2), որը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվում, քանի որ հրավերով սահմանված է, որ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը դիմում հայտարարությունը լրացնելիս նշում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի համաձայն՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցած՝ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը: ՊՄՍԵՐՎԻՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում հայտարարությունում (Հավելված N 1) նշված է ՊՄՍԵՐՎԻՍ ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1. Անուշ Պետրոսյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտում առկա

- գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,
- գնային առաջարկը (Հավելված 2) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2.2. ՍԵԳ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա

- գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված N 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

• դիմում-հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԳՀԾՁԲ-23/02» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցին փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին հավաստումը,

• դիմում-հայտարարության 2)-րդ կետում բացակայում են «անբարեխիղճ մրցակցություն» բառերը,

- գնային առաջարկը (Հավելված 2) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2.3. ՊՄՍԵՐՎԻՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա

- գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

• դիմում հայտարարության երրորդ նախադասությունում գործունեության հասցեն լրացված է ոչ ամբողջական,

• դիմում հայտարարության 1)-ին կետում ներառված չէ «ԴԴ-ԳՀԾՁԲ-23/02» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին մասնակցին փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին հավաստումը,

• դիմում հայտարարության 2)-րդ կետում բացակայում են «անբարեխիղճ մրցակցություն» բառերը,

- գնային առաջարկը (Հավելված 2) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2.4. Բենիամին Դալլաքյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա

- գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան (դիմում հայտարարությունում նշված իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքի հղումը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվում, քանի որ հրավերի ՄԱՍ Ի-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի «ե)» պարբերության պահանջների համաձայն՝ եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր է, ապա հայտարարագիր չի ներկայացվում (հրավերի Հավելված 1-ով ներկայացված գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարության ծանոթագրությունում ևս նշված է, որ, եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր է, ապա իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացնում)),

- գնային առաջարկը (Հավելված 2) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ գնային առաջարկում նշված չէ արժույթը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները՝ հանձնաժողովը որոշեց Բենիամին Դալլաքյան Ա/Ձ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

2.5. Բևեռային ուղի ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա

- գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

- գնային առաջարկը (Հավելված 2) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Մասնակիցների առաջարկած գներն են.

ՀՀ դրամ

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	ԱՁ Անուշ Պետրոսյան			ՍԵԳ ՍՊԸ		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ				410 550		**410 550**
2	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ				212 380		**212 380**
3	Պատճենահանող սարքերի, տպիչների պահպանման ծառայություններ	5 750		**5 750**	10 660		**10 660**

ՀՀ դրամ

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	ՊՄՍԵՐՎԻՍ ՍՊԸ			Բևեռային ուղի ՍՊԸ		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	499 999		**499 999**	337 237,5	67 447,5	**404 685**
2	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ				142 450	28 490	**170 940**
3	Պատճենահանող սարքերի, տպիչների պահպանման ծառայություններ						

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	Ա/Ձ Բենիամին Դալլաքյան		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	260 700		**260 700**
2	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	95 700		**95 700**
3	Պատճենահանող սարքերի, տպիչների պահպանման ծառայություններ			

4. Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2023թ. ապրիլի 21-ին՝ ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԳՀԾՁԲ-23/02» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.9 կետի պահանջներով՝ հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել ՍԵԳ ՍՊԸ-ին, ՊՄՍԵՐՎԻՍ ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **ապրիլի 20-ը ներառյալ** շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ Նորայր Աղամալյան

Անդամներ՝ Տիգրան Զեյնալյան

Անդրանիկ Աբգարյան

Արմինե Մարգարյան

Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման, պատճենահանող սարքերի, տպիչների պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-23/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«21» ապրիլի 2023թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

հանձնաժողովի անդամներ՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

Արմինե Մարգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – տնտեսագետ (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**)

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԳՀԾՁԲ-23/02» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ՍԵԳ ՍՊԸ-ի, ՊՄՍԵՐՎԻՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.

ՍԵԳ ՍՊԸ-ն, ՊՄՍԵՐՎԻՍ ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց.

Անուշ Պետրոսյան ԱՁ-ի, ՍԵԳ ՍՊԸ-ի, ՊՄՍԵՐՎԻՍ ՍՊԸ-ի, Բևեռային ուղի ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ.

Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով՝ հանձնաժողովը որոշեց.

- **1-ին, 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել /հայտարարել Բևեռային ուղի ՍՊԸ-ին,**
- **3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել /հայտարարել/ Անուշ Պետրոսյան ԱՁ-ին:**

- 1-ին չափաբաժնի մասով ընտրված չճանաչված մասնակիցներ հայտարարել ՍԵԳ ՍՊԸ-ին, ՊՄՍԵՐՎԻՍ ՍՊԸ-ին,
- 2-րդ չափաբաժնի մասով ընտրված չճանաչված մասնակից հայտարարել ՍԵԳ ՍՊԸ-ին,
- 3-րդ չափաբաժնի մասով ընտրված չճանաչված մասնակից հայտարարել ՍԵԳ ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),
- գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Նորայր Աղամալյան

Անդամներ՝ _____ Տիգրան Զեյնալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Արմինե Մարգարյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Արուս Խաչատրյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
պայմանագիր կնքելու որոշման մասին

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԳՀԾՁԲ-23/02»**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման, պատճենահանող սարքերի, տպիչների պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-23/02» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը՝

Գնահատող հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 21-ի թիվ 4 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները: Համաձյան որի՝

Չափաբաժին 1:

Գնման առարկա են հանդիսանում՝ **Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ**:

Հ/Հ	**Մասնակցի անվանումը**	**Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր** /համապատասխանելու դեպքում նշել “X”/	**Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր** /չհամապատասխանելու դեպքում նշել “X”/	**Անհամապատասխանության համառոտ նկարագրություն**
1	Բևեռային ուղի ՍՊԸ	X		
2	ՍԵԳ ՍՊԸ	X		
3	ՊՄՍԵՐՎԻՍ ՍՊԸ	X		
4	Ա/Ձ Բենիամին Դալլաքյան		X	Բենիամին Դալլաքյան Ա/Ձ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները:

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	**Մասնակցի անվանումը**	**Ընտրված մասնակից** /ընտրված մասնակցի	**Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, ՀՀ դրամ/**

		համար նշել “X”/	
1	Բևեռային ուղի ՍՊԸ	X	337 237.5
2	ՍԵԳ ՍՊԸ		410 550
3	ՊՄՍԵՐՎԻՍ ՍՊԸ		499 999
-	Ա/Ձ Բենիամին Դալլաքյան		260 700

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ հրավերին համապատասխանող հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Չափաբաժին 2:

Գնման առարկա են հանդիսանում՝ **Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ:**

Հ/Հ	**Մասնակցի անվանումը**	**Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր** /համապատասխանելու դեպքում նշել “X”/	**Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր** /չհամապատասխանելու դեպքում նշել “X”/	**Անհամապատասխանության համառոտ նկարագրություն**
1	Բևեռային ուղի ՍՊԸ	X		
2	ՍԵԳ ՍՊԸ	X		
3	Ա/Ձ Բենիամին Դալլաքյան		X	Բենիամին Դալլաքյան Ա/Ձ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները:

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	**Մասնակցի անվանումը**	**Ընտրված մասնակից** /ընտրված մասնակցի համար նշել “X”/	**Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, ՀՀ դրամ /**
1	Բևեռային ուղի ՍՊԸ	X	142 450

2	ՍԵԳ ՍՊԸ		212 380
-	Ա/Ձ Բենիամին Դալլաքյան		95 700

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ հրավերին համապատասխանող հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Չափաբաժին 3:

Գնման առարկա են հանդիսանում՝ **Պատճենահանող սարքերի, տպիչների պահպանման ծառայություններ:**

Հ/Հ	**Մասնակցի անվանումը**	**Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր** /համապատասխանելու դեպքում նշել “X”/	**Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր** /չհամապատասխանելու դեպքում նշել “X”/	**Անհամապատասխանության համառոտ նկարագրություն**
1	ԱՁ Անուշ Պետրոսյան	X		
2	ՍԵԳ ՍՊԸ	X		

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	**Մասնակցի անվանումը**	**Ընտրված մասնակից** /ընտրված մասնակցի համար նշել “X”/	**Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, ՀՀ դրամ /**
1	ԱՁ Անուշ Պետրոսյան	X	5 750
2	ՍԵԳ ՍՊԸ		10 660

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ հրավերին համապատասխանող հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԾՁԲ-23/02» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արուս Խաչատրյանին:

Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝

Հեռախոս՝ **010-511-787**:

Էլեկտրանային փոստ՝ **ddgnumner@mail.ru**:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**